ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ. ՄԻ ՔԱՆԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարեն Հովհաննիսյան

ՀՀ տարածքում ամենից հաճախ հանդիպող ժողովրդական սրբավայրերն են Թուխ Մանուկները: Նախնական հետազոտության արդյունքում գրեթե համոզված կարելի է ասել, որ բացառությամբ արևելյան շրջանների (Տավուշ, Սյունիք, ներառյալ Արցախը), ՀՀ մյուս մարզերում Թուխ Մանուկ սրբավայրերը բազմաթիվ են:

Թուխ Մանուկ սրբավայրերի մասին գրեթե չկա հետազոտություն, Թուխ Մանուկների վերաբերյալ հիմնական գրականությունը վերաբերում է ազգագրական-հավաքչական նյութին[1], իսկ վերլուծություն պարունակող աշխատանքների քանակը սահմանափակվում է մի քանի հոդվածներով:

Սույն աշխատանքում կներկայացվի Գեղարքունիքի մարզի մի քանի Թուխ Մանուկների ներկայիս նկարագիրը, ավանդազրույցները, գործառույթներն ու ընկալումները[2]:

Վարդենիկ գյուղի Թուխ Մանուկ[3]

Վարդենիկի Թուխ Մանուկը կառուցված է ոչ մեծ բլրի վրա, որը բոլոր կողմերից ամրացված է քարե պատերով: Դիմացը երեք աստիճաններ են, որոնցից վերև մետաղյա փոքրիկ դարպասն է՝ մեջտեղում խաչ, ևս երեք աստիճան և մի քանի մետր երկարության բետոնե ուղին տանում են դեպի մատուռը: Դուռը բավական բարձր է, մեջտեղում՝ սպիտակ խաչ, մի խաչ էլ երկթեք տանիքի գագաթին է (նկ. 1): Շուրջը, բնակելի տներ են:

Ներսից, դռան դիմաց, ինչպես հաճախ Թ. Մ[4].-ներում, բեմն է, որի վրա կանգնեցված է մի խաչքար՝ պատվանդանով[1], որը փոխարինում է սեղանին:

---

[1] Քանի որ սույն հոդվածն ունի նկարողագրական բնույթ, ապա նպատակահարմար գտա մանրամասն չանդրադառնալ առկա գրականությանը:

[2] Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հասմիկ Սահակյանին ու նրա ծնողներին Վարդենիկից, Մերի Գրիգորյանին ու նրա հորը՝ Տերենտ Գրիգորյանին Մարտունուց, Սմբատ Սմբատյանին ու Հոխիկյանների ընտանիքին Լիճքից և Արման Շիշանյանին ու Գարիկ Գափոյանին Կարմիրից մեզ հյուրընկալելու և օժանդակելու համար:

[3] **Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ.,** Դաշտային նյութ (հետագայում՝ ԴՆ), գ. Վարդենիկ, 2013:

[4] Հետագայում Թուխ Մանուկ անվանումը կտրվի կրճատ՝ Թ. Մ.:

Խաչքարի պատվանդանին դասավորված են քրիստոնեական տարբեր թեմատիկայի տպագրված վերարտադրանկարներ (ռեպրոդուկցիա)։ Խաչքարի ետևում բացված է ուղղանկյուն մի լուսամուտ (նկ. 2)։ Մատուռի ներսում միջին լուսավորություն է։ Այս Թ. Մ.-ը բավական մեծ է։ Հետաքրքրություն է ներկայացնում բեմից աջ, յուրահատուկ խորշի մեջ գտնվող տապանաքարը։ Այն ուղղանկյուն է, դիմացի կողը բարձրանում է հատակից մոտ 30 սմ, հետին կողը հպված է պատին։ Տապանաքարի վրա փորագրված է մի ֆիգուր, հավանաբար հղի կնոջ, քանի որ նրա որովայնի մասում դեպի ներքև նույն ձևով փորագրված է ավելի փոքր մի ֆիգուր։ Փոքր ֆիգուրից վերև, տապանաքարի մեջտեղում փորագրված է այսպես կոչված հավերժության նշանը։ Երկու ֆիգուրների գլխավերևում կամարաձև փորագրություններ կան, որոնք միանում են մեծ ու փոքր ֆիգուրները երիզող ուղղանկյուններին, լուսապսակի տպավորություն ստեղծելով[2] (նկ. 3)։ Ըստ մատուռի մեջի գրվածքի այն կառուցվել է 1926 թ.։

Թ. Մ. մատուռի մոտակայքում մեծ աղբյուր է, որը սնուցում է գյուղը ջրով, մեր այցելության ժամանակ խողովակը հերթական անգամ վնասվել էր և, ջուրը լցվել էր շուրջ բոլորը։ Խմեցինք այդ ջրից, շատ համեղ և սառնորակ էր։ Աղբյուրն անվանում են Թուխ Մանուկի ջուր։

Ըստ ավանդության, մի ժամանակ օտարական սևուկ, թուխ տղա է եղել, ով շատ է աղոթել, ամբողջ օրը մատուռից դուրս չի եկել, հետևել է մաքրությանը, ու իր թխության պատճառով սրբավայրը կոչել են Թուխ Մանուկ[3]։

Վարդենիկը հայտնի է իր Վարդավառի ուխտով[4], որի գլխավոր ուխտատեղին է Վարդենիկ գետի մյուս ափին գտնվող Իշխանավանքը։ Եկեղեցին գտնվում է հին գերեզմանոցի ծայրին[5]։ Իխանավանքից քիչ հեռու, ձորի երկայնքով, գետի ափին միշտ բազմամարդ է լինում, հատկապես Վարդավառին, երբ ուխտավորները խնջույքի են նստում և հանգստանում են։ Իշխանավանքից, կամրջով անցնելով գետը, Վարդավառին գնում են դեպի Թ. Մ.՝ ներքևից դեպի վերև, ձորից դեպի գյուղ, հեռավորությունը մոտ 500 մ. է, արահետը բերում է ուղիղ Թ. Մ.։ Հետաքրքիր է, որ մեզ ուղեկցեցին դեպի Իշխանավանք գյուղի կենտրոնական հրապարակով, Ս. Աստվածածին եկեղեցու մոտի ճանապարհով դեպի

---

1 Խաչքարը 13-14 դ. գործ է (Խաչքարերի թվագրության համար շնորհակալություն եմ հայտնում հնագետ, պ. գ. թ. Հ. Մելքոնյանին)։

2 Ցավոք, մեզ ոչինչ չհաջողվեց պարզել այդ տապանաքարի վերաբերյալ։

3 Հայտնել է Հասմիկ Սահակյանը, 1994 թ. ծնվ.։

4 Մեր գիտարշավը ժամկետով հարմարեցված էր Վարդավառին։

5 Պետք է նշել, որ Վարդենիկում կան մի քանի գերեզմանոցներ, Իշխանավանքինն ամենամեծն է և, թերևս, ամենահինը և մինչ այժմ գործում է։

գերեզմանոց, իսկ վերադարձանք գյուղ մյուս կողմով, անցնելով Թ. Մ-ի մոտ, այսինքն շրջան գծեցինք՝ շրջափակեցինք մեր ուխտը։

Թ. Մ. փոխարինել է գործող եկեղեցուն, կողքին եղել է հին գյուղի գերեզմանոցը[1]։ «Որ մեկի մարդ, կին, էրեխա կմահաներ, կտանին դիակ գիշեր դնին էտեղ։ Թաղման առավոտ գերեզմանոցից նաշը կբերին, կտանին բյազ կամ փաթուսխա պատանք կարին, գոտի կապին մեջքն...»։ Թ. Մ. զորավոր սուրբ է, նրան ուղղված հատուկ բանաձև կա. «Սուրբ Թուխ Մանուկ, դու գիտես»[2], որը երդման, վկայակոչելու իմաստն ունի։

Թ. Մ. բերել են «վերքով հիվանդ» մարդկանց։ Երբ տեղեկությունը հայտնողի տղան 40 օրական էր, ինքը կաթ չուներ։ Նրանք վերցրին մոմեր, շուշպա և խաշած ցորեն, և սկեսուրը ուղեկցեց նրան մինչև Թ. Մ. առանց խոսելու։ Սրբավայրի բակից շշով ջուր լցրեցին, խաչքարերի մոտից վերցված հողով ցեղ շաղախեցին, քսեցին անկաթ ստիքներին։ Սկեսուրը աղոթք արեց, ինքը մնաց մունջ։ Հետո իջան Թ. Մ. աղբյուրի մոտ, ցորենը լցրին ջրի մեջ, կրծքերը լվացին, շուշպայով սրբեցին, նորից գնացին Թ. Մ.։ Գիշերը կաթը գնաց։ Կերակրել է 7 ամիս[3]։

Թ. Մ.-ում բուժում էին նաև գորտնուկները։ Թեև չհաջողվեց պարզել, եղե՞լ են արդյոք Թուխ Մանուկի տվածներ, սակայն պատմածից պարզ է, որ Թ. Մ.-ի գործառույթներից է երեխաների պահպանությունը, խնամքը։ Էջմիածնի վանքի պահակը նաև պատմել է Հասմիկ Սարգսյանին, որ իր երիտասարդ բարեկամը ծանր հիվանդ է եղել, եկել են Վարդենիկի Թ. Մ. ջրից տարել են, ջահելի վերքերը լվացել են այդ ջրով, լողացրել՝ բուժվել է։

Վարդենիկի Թ. Մ.-ին վերագրվել է նաև կորուստը վերադարձնելու հատկությունը։ Մի արծաթե քամար կորել էր, պարզվեց՝ մի տարիքով կին էր գողացել, որի աջ ձեռքը թուլացել էր։ Այդ կինը չոքեչոք աղջկա հետ գնաց Թ. Մ.։ Հաջորդ օրը կինը եկավ պատմողի տուն և ասաց, որ նա կապի քամարը, գնա պարելու, ինքը գնում է քամարը բերում և ձեռքը վերականգնվում է։

Թ. Մ.-ին տեսել են գեղեցիկ պատանու կերպարանքով, սև մազերով, յափնջու նման շորով, ոտաբոբիկ, անմորուս, անզեն։ Խոսել է պատմողի հետ, բարի բախտ է ցանկացել[4]։

Հիմնական մատաղն է աքլոր, ավելի հազվադեպ՝ գառ։

---

[1] Հայտնել է Վահան Պողոսյանը, 1951 թ. ծնվ.։

[2] Հայտնել է Սիրուն Սահակյանը, 1923 թ. ծնվ.։

[3] Հայտնել է Հասմիկ Սարգսյանը, 1961 թ. ծնվ.։

[4] Հայտնել է նույն բանասացը։

Ծաղկազարդին և Համբարձմանը ուռենու ճյուղեր էին դնում պուլիկի մեջ, մեջը լցնում Թ. Մ.-ի ջրից և ավելացնում խնոցու մեջ, որ լավ կարագ լինի[1]: Թ. Մ. կարևորությունը հատկանշական է նաև Վարդավառ, Ծաղկազարդ և Համբարձում տոների հետ կապով:

Մարտունի. Գոմերի մոտի Ս. Գևորգ-Թուխ Մանուկ[2]

Տեղացիներից ոմանք այս սրբավայրը գիտեին որպես Ս. Գևորգ, ոմանք էլ՝ Թ. Մ.: Հիմնականում երկու անունն էլ ասում են: Ինչպես պարզ է անվանումից, այդ տարածքում ԽՍՀՄ ժամանակ գոմեր են եղել:

Այս Թ. Մ. ևս կառուցված է տնակի տեսքով, երկթեք տանիքով (նկ. 4): Դռան վերևում, եռանկյունաձև ճակատի վերևի մասում ագուցված է քարի վրա քանդակած խաչը: Տանիքի վրա, ճակատի գագաթին մետաղյա խաչ է: Սրբավայրի դուռը բացված է բավականին լայն կողմերով կամարի ներքո: Շուրջը առանձնացված է, մասամբ ցանկապատված ցանցով, տարածքում գտնվում են տաղավար՝ խնջույքի, հանգստանալու համար, մետաղյա հարմարանք՝ մատաղացու կենդանին կախելու և մաշկազերծելու համար: Մատուռի արևելյան կողմում հանքային ջրի աղբյուր է՝ սառնորակ ու քաղցր առողջարար ջրով, որը ցայտում է անմիջապես հողից, ինքնահոս, փոքրիկ առվակով դուրս է գալիս սրբավայրի տարածքից: Մի տաղավար էլ սարքած է աղբյուրի մոտ: Դիմացը, դռան պատի ձախ կողմում ագուցված է փայլուն քարի վրա դրոշմված խաչելություն՝ երկու կողմից նկարված վառվող մոմերով: Դա նվիրատվություն է մատուռին՝ ակնկալիքներով կամ գուցե երեխա պարգևելու դիմաց շնորհակալություն հայտնելու մի ձև:

Ներսում բավական լուսավոր է չորս կողմից բացված լուսամուտների շնորհիվ: Այստեղ բեմը ոչ թե ուղիղ դռան դիմաց է, այլ դռնից ձախ: Ներսում կան խաչքարերի, պատկերաքանդակների սևացած և մոմապատ բազմաթիվ բեկորներ՝ (նկ. 5), ինչպես նաև բազմաթիվ վերարտադրանկարներ՝ քրիստոնեական սյուժեներով և տաճարների մի քանի մանրակերտ: Առաստաղը պատված է կավիճով արված նվիրական գրերով, սիրո խոստովանություններով, իսկ պատերի վրա նույն բովանդակության գրվածքներ կան մոմով արված:

Ըստ բանասացի՝ ամեն տեղ կա Ս. Աստվածածին և Թուխ Մանուկ, Մարտունունը լսել է որպես Ս. Գևորգ: Մեջը կա ցանկությունների քար, որի վրա երեք անգամ քսում և փակցնում են մանր քարեր, եթե կպչում է՝ ցանկությունը կկատարվի: Մեծ մասամբ մատաղն անում են երեկոյան: Մատաղ են անում

---

[1] Հայտնել է Սարգսյան Միքայել, 1956 թ. ծնվ.:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան,** ԴՆ., ք. Մարտունի, 2013:

աքլոր, գառ, հատուկ առիթներով՝ ուլ, բաժանում են հնարավորինս շատ տներ։ Բաժանում են ինչպես հում, այնպես էլ եփած (խաշած՝ ամանով կամ լավաշով) վիճակում[1]*։*

Գեղհովիտի Թուխ Մանուկ (Ս. Մաման)[2]

Այս Թուխ Մանուկն արդեն կառուցած է որպես եկեղեցի։ Զանգակատան գմբեթ հիշեցնող, վեց սյունակների վրա նստեցրած գմբեթը պսակված է մետաղյա խաչով։ Գմբեթի պատվանդանն ունի տաճարանման տեսք։ Դուռը վերցված է ուղղանկյուն զարդափորագրված շրջանակի մեջ։ Դռան վերևում, դռան ու շրջանակի վերին եզրի միջև ընկած տարածության մեջ, մեծ սալի վրա, կամարի տակ փորագրված է մեծ տառերով. «Թուխ Մանուկ», որից ներքև՝ «Եղիցի լոյս եւ եղավ լոյս»։ Շրջանակից վերև, մեծ խաչի ներքևի թևի տակ մանր քառակուսի ճաղերով փոքր լուսամուտ է բացված, իսկ ճաղերի վրա մետաղյա խաչ է ամրացրած (նկ. 6)։

Եկեղեցու երկու կողմը սրբատաշ քարերով հատակ է կառուցված, երեք կողմից ոչ բարձր պարսպով առանձնացված է սրբավայրի ետևում ընկած բըլրից։ Եկեղեցու ձախ կողմում, պարսպի կենտրոնում ագուցված է խաչքար, երկու կողմերից ագուցված են կամարներով ու կենաց ծառերով զարդարված ևս երկու քար։ Խաչքարի տակ սեղան է պատրաստված, որի վրա կանգնեցված են երեք մետաղյա խաչեր։ Եկեղեցու աջ կողմում ցայտաղբյուր է և անծածկ տաղավար։ Ցայտաղբյուրի և եկեղեցու մեջտեղում խաչքար է կանգնեցված, փորագրած ասեղնագործ խաչքարերի ոճով[3]*։ Եկեղեցու ետևում մի մեծ ժայռաբլուր է, որի կենտրոնական մասից ջուր է հոսում՝ ստեղծելով նոսր ջրվեժ։*

Եկեղեցու անմիջապես դիմացից ասֆալտապատ Եղեգնաձոր-Մարտունի ավտոճանապարհն է։ Հնում ևս այս ճանապարհը Սելիմի լեռնանցքով իրար է կապել Գեղարքունիքն ու Վայոց Ձորը։ Գեղհովիտը ընկնում է Սելիմի լեռնանցքի Գեղարքունիքի մուտքին։ Հետաքրքիր է, որ դրա հակադիր ծայրում, Սելիմի լեռնանցքի Վայոց Ձորի մուտքի առաջին գյուղում՝ Քարագլխում, ևս կա Թուխ Մանուկ։ Գեղհովիտի դիմաց, Սելիմի լեռնանցքի մյուս ծայրին՝ Վայոց ձորի մարզի Քարագլուխ գյուղից քիչ արևելք գտնվում են 12-13-րդ դարի Ս.

---

1 Հայտնել է Տերենտ Գրիգորյանը, 1945 թ. ծնվ.:

2 **Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ.,** ԴՆ., գ. Գեղհովիտ, 2013:

3 Այն Գոշավանքում գտնվող Պողոս վարպետի հանրահայտ «ասեղնագործ» խաչքարի կրկնօրինակով է արված, սակայն ավելի մակերեսային գործ է: Պարզաբանման համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ, պ. գ. դ., պրոֆեսոր Հ. Պետրոսյանին:

Մամաս վանքի ավերակներն ու Թուխ Մանուկը[1]։ Մատուռը[2] (ըստ Քաջբերունու, Քարագլխից դեպի արևելք, բլրի վրա, ուր գտնվում են Ս. Մամասի եկեղեցու ավերակները, Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Խարաշկոնք հին գյուղի մնացորդները)[3]։

Այս երկու գյուղերին կապում է հիշարժան մի ավանդություն։ Սյունյաց իշխանները Ս. Գրիգորի և Ս. Ներսեսի հետ գնացել էին Կեսարիա, մեծ ծախսերով և չարչարանքներով գտնում են երանելի ու մեծ ճգնավոր Ս. Մամասի նշխարները, որ բնակվել էր Կեսարիայի մոտի լեռան վրա (Կեսարիայի Մամունի լեռան ստորոտում է գտնվել Ս. Մամասի գերեզմանը)[4]։ Նրանք վերցնում են նշխարների կեսը՝ մեջքից վեր՝ գլխով ու բազուկներով հանդերձ, մյուսը թողնելով իր սուրբ եկեղեցում, նույն տապանի մեջ։ Հասնելով Մազազ գավառը (Արարատյան նահանգի 17-րդ գավառը։ Ընկնում է Հրազդան գետի և Աղմաղան[5] (Արմաղան) լեռնազանգվածի միջև)։ Գեղամա լեռներն անցնելով մտնում են Վայոց ձոր, քանի որ ուզում էին տանել Սյունիքի իշխանական աթոռը։ Սակայն վերին կամոք ջորիները կանգ են առնում Սուլեմա (Սելիմի) ձորի մեջ, մի հարթ տեղում, որ Դեզապանարտ է կոչվում։ Աղոթքներով պաշտամունքային արարողություններից հետո ջորիները շարժվում են և կանգ առնում Խարաշկոնք կոչված գյուղի սահմաններում, որտեղից այլևս դուրս չեն գալիս։ Սյունյաց եպիսկոպոսի ներկայությամբ նշխարները թաղում են քարե տապանի մեջ, որի մոտ կրաշաղախ քարերով վկայարան են կառուցում։ Աթաբեկ Իվանեի ժամանակ

---

1 Հուշարձանների պահպանության ցուցակում տրված է միայն Թուխ Մանուկ անունը, որ համարվում է 12-18-րդ դդ. եկեղեցի:

2 Գյուղից երեք վերստ դեպի հյուսիս, բարձրավանդակում, կա մի եկեղեցու ավերակ՝ երեք սեղանով: Գյուղացիները տապանաքարերով և հասարակ քարերով սեղանների վրա մի փոքրիկ տնակ են շինել, գլուխը ծածկել փայտով, դարձրել են ուխտատեղի և մկրտել են Թուխ Մանուկ կոչումով. Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, «Մուղնի», Եր., 2003, էջ 129: Նույնը կրկնում է Ե. Լալայանը, տե՛ս Ազգագրական Հանդէս, գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 278-279: Սակայն այժմյան դիրքի համաձայն Թուխ Մանուկն ընկնում է Ս. Մամասի ավերակների հարևանությամբ՝ գյուղից դեպի արևելք, բարձրադիր բլրի վրա: Հյուսիսային մասում գերեզմանատուն է, ուր կանգուն են V-VII դդ. երկու քառակող կոթողներ, տե՛ս Քաջբերունի, Նշվ. աշխ., ծանոթագրություններ, էջ 415-416:

3 **Քաջբերունի,** Նշվ. աշխ., էջ 132:

4 **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Եվդոկիոյ հայերի, Գահիրէ, 1952, էջ 498:

5 Անհրաժեշտ է նշել, որ ժողովուրդը պահպանում է լեռնազանգվածի հին անվանաձևը, համառորեն անվանելով Մաղմաղան և ոչ՝ Արմաղան: Ինչպես հայտնի է, այդ լեռնազանգվածի առավել բարձր գագաթը, որը նույնպես Մաղմաղան անունն է կրում և որտեղ կա լիճ, մարտունեցիների վարդավառյան առավել մեծ ժողովրդականություն վայելող ուխտավայրն է:

Սեթ և Պողոս անունով երկու կրոնեղբայրներ խորան կառուցեցին և այնտեղ տեղադրեցին նշխարներով տապանը[1]։

Գեղհովիտի այժմյան Թ. Մ.-ի ներսում, պատին փակցված է մատուռի հին շենքի (մինչև եկեղեցու կառուցելը) նկարն ու ավանդությունը։ Մատուռը եղել է ուղղանկյուն տնակ՝ երկթեք տանիքով։ Ըստ գրության, որ եղել է մատուռի մեջ, բայց ոչ թե արձանագրություն, այլ տպագրված. մատուռը կառուցվել է 353 թ., երբ Սյունյաց իշխաններն այստեղ են ամփոփել Ս. Մամասի աճյունից և օծել են որպես քրիստոնեական սրբավայր[2]։

Ներսում, հենց դռան վերևում մի սալ է ագուցված պատի մեջ, որին արձանագրված է. «Աղջոյի շինարար տոհմը 1830 թ. գաղթեց Ալաշկերտից այնտեղ ու այստեղ կառուցեց տուն ու մատուռ ձիթհան ու ջրաղաց Կամոքն Աստծո չի դադարի կառուցել»։ Հավանաբար Աղջոյենց կառուցած մատուռը ներսում, պատին փակցված նկարի տնակն է, որ 1996 թ. հուլիսի 4-ից վերածվել է եկեղեցու։

Դռան դիմաց կառուցված է ավագ խորանը բեմով։ Սեղանը պատվանդան է՝ երկու սյան վրա կանգնեցրած կամարի ներքո գտնվող խաչքարի համար։ Խաչքարը 12-13 դ. գործ է, կենտրոնում մեծ խաչ է, չորս անկուններում ավելի փոքր խաչեր, վերևի անկյունները՝ ձախից ավելի, աջից՝ քիչ, կոտրված են։ Ամբողջ խաչքարը ճեղքվածքով բաժանված է եղել երկու անհավասար մասերի, հետագայում այն միացրել են շաղախով։ Թեքությամբ ձգվող, խաչքարի սևացած ֆոնին ցայտուն երևացող սպիտակ շաղախի երկայնքով դրված են մանրադրամներ։ Կամարի սյուները վերջանում են քառակուսի, պարզ եռանկյունազարդ խոյակներով, որոնց վրա կանգնեցրած է կիսակլոր սալ, վրան քանդակված Ս. Աստվածածինը Մանկան հետ, որոնց հետևում կամարաձև շրջանակը, մեջը բաժանված ճառագայթներով։ Կամարից վերև տեղադրված է Ռեմբրանդտի «Իսահակի զոհաբերությունը» կտավի վրձնանկար կրկնօրինակը։ Նկարից վերև, ավագ խորանի կամարին քանդակված է. «Ուխտ արա հոգով Գնա օրհնությամբ»։ Գրեթե ամբողջ բեմը ծածկված է գորգով, մեծ խաչով առանձին, ծալած գորգ է փռված սեղանի տակ՝ առաջինի վրա։ Մի ասեղնագործ խաչով սփռոց գցված է սեղանին, որի վրա և կողքերը ժողովրդի նվիրատվություններն են՝ ասեղնագործ և ծղոտագործ խաչեր, փոքր մոմակալներ, խաչերով մի քանի

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, «Սովետական գրող», Եր., 1986, էջ 233–234:

[2] Հավանաբար, 353 թ. վերցված է Օրբելյանի մոտ հիշատակված Ներսես Մեծի ժամանակը՝ նա կաթողիկոս է օծվել հենց 353 թ.: Սակայն Օրբելյանի մոտ չկա հիշատակություն, որ նշխարների մի մասը թողել են այստեղ, թեև Վայոց Ձոր մտել են Գեղարքունիքով: Ըստ Օրբելյանի, մինչև Խարաշկոնք հասնելը ջորիները կանգ են առել Դեզապանարտ վայրում, Սելիմի ձորի մեջ (տե՛ս հղում 22): Քաջբերունին ոչինչ չի հիշատակում Գեղհովիտի վերաբերյալ, պատմելով Ս. Մամասի մասին:

վզնոց և վերարտադրանկարներ։ Կամարից աջ, պատին մի մեծ ու շքեղ գոբելեն է՝ Ս. Աստվածածինն ու Մանուկը (Կազանի Աստվածամայր)։ Ավագ խորանն ունի ալ կարմիր վարագույր, վրան սպիտակ խաչ (նկ. 7)։ Մինչև խորանի բացվածքը, պատերի երկու անկյուններում ագուցված են ոչ մեծ երկու խաչքար՝ ամեն կողմից մեկ հատ։ Աջ խաչքարին կպած մի կլոր քար կա, որը երեք անգամ քսում-թողնում են, որ կպչի՝ ցանկությունը կկատարվի։

Թ. Մ. եկեղեցին միշտ եղել է գյուղի գլխավոր սրբավայրը, որը բազմամարդ ուխտատեղի է եղել դեռևս մատուռ եղած ժամանակ։

Ստալինի օրոք Թ. Մ.-ը փակել են։ Քանի որ կառուցված է ճանապարհին, միշտ դիտվել է որպես ճանապարհորդների պահապան։ Շատ դեպքեր են եղել, երբ մեքենաները ձորն են ընկել, բայց Սուրբը պաշտպանել է՝ մեքենաները ջարդվել են, մարդիկ կենդանի մնացել։ Մատուռը եկեղեցու է վերածել Վարդգես Պողոսյանը, օծել է 1997 թ. Գարեգին Ա կաթողիկոսը։ Այսօր էլ եկեղեցին շատ ուխտավորներ ունի։ Այստեղ նաև կատարվում են պսակադրություններ և կնունքներ։ Բանասացը Թուխ Մանուկին տեսել է կարճահասակ, գանգրահեր, շեկ տղամարդու տեսքով, որն իրեն ասել է. «Պահեք-պահպանեք (սրբավայրը)»[1]։

19-20 տարեկան նոր ամուսնացած մի աղջիկ վախեցել էր, փետրվար ամսին գիշերով եկել է սրբավայր, ժամհարը ձեռքը դրել է գլխին, և աղջիկը լավացել է։ Եղել է, որ Թ. Մ. երեխա է տվել, մեկին երազում հրամայել է, որ նորածին երեխայի անունը փոխի, դնի Մանուկ[2]։

Ամեն անգամ սրբավայրի կողքով անցնելիս ընդունված է մոմ վառել։ Մատաղում են աքլոր, ոչխար, պատահում է և երինջ՝ միայն ընտանիքի ծախսով։ Հիմնականում այցելում են շաբաթ-կիրակի օրերին, ցանկացած ժամի։ Եթե հատուկ նպատակով ուխտ պիտի անեն, գնում են կեսօրից հետո (ժ. 14.00-ից)։ Հեռվից եկողները շուտ են գալիս։ Եթե մեկի երեխան, հարսը հիվանդանում է, գնում են, մոմ վառում, աղոթք անում, այդ դեպքում գնում են երեք անգամ։ Փափագը միշտ կատարվում է։ Գնում են երեխա ունենալու, սիրածի հետ ամուսնանալուն աջակցելու խնդրանքով։ Կան Մանուկ անունով սրբի տված երեխաներ։ Թ. Մ. են գնում ցանկացած տարիքի մարդիկ, թե տղամարդ, թե կին։ Մինչև Թուխ Մանուկը եկեղեցու վերածելը կապված է եղել Վարդավառի հետ[3]։

---

[1] Հայտնել է. Վանես Պողոսյանը, 1958 թ. ծնվ.։

[2] Հայտնել է. Թինա Սիմոնյան-Մովսիսյանը, 1947 թ. ծնվ.։

[3] Ըստ ամենայնի, եկեղեցի դառնալով, Թ. Մ. այլևս չի ընկալվել որպես ուխտատեղի, այլ դարձել է ուղղակի գյուղի եկեղեցին, ինչով էլ պայմանավորված է Վարդավառի հատուկ ուխտագնացության դադարելը։

Սուրբը տեսիլք է եկել է ջահել ձիավոր տղամարդու տեսքով: Սրբի հետ շատ զգույշ են վարվում: Կիրով պապիի պատմածով Թուխ Մանուկը հայ չի եղել, սև մաշկով մանուկ է եղել: Կա հատուկ աղոթք Թուխ Մանուկին ուղղված.

«Թուխ Մանուկ, քու անուշ անվան մեռնեմ,

Իմ նպատակը կատարես, ես մատղով-շուշպով կգամ քո դուռ»:

Եթե նորածին երեխայի մայրը կաթ չունի, երեք անգամ պիտի գնա Թուխ Մանուկ, փոքր (աջ կողմի) խաչքարի վրայի կլոր քարը նորից կպցնի խաչքարին, կաթը կշատանա: Չխոսող երեխաներ են բերել, խնդրել են Մանուկին և նա նրանց լեզու է տվել: Եթե Թուխ Մանուկից ուխտով ժառանգ են խնդրում ու ստանում, ապա մեկ-երկու տարի երեխայի մազերը չեն կտրում, հետո մատաղ են անում, շուշպա են բերում, այդ երեխայի մազերը կտրում, թաղում են շեմի տակ: Այս ամբողջ արարողությունը կատարվում է առանց հոգևորականի: Մինչև Թուխ Մանուկի եկեղեցի դառնալը, հենց Թ. Մ.-ն էլ ունեցել է եկեղեցու գործառույթ:

Հետաքրքիր մի ավանդություն կա այս Թ. Մ.-ի հետ կապված: Գարեգին Նժդեհի հերոսներից մեկը անցել է այստեղից, գնացել է պատերազմ ու երեք հարյուր հայ զինվորով հաղթել յոթ հարյուր թուրքի: Այդ դեպքից հետո երեխա է ծնվել, որի անունը դրել են Մանուկ՝ ի նշան հաղթանակի: Այդ սպայի անունով էլ Թ. Մ.-ի միջի մեծ խաչքարը կոչվում է Սպայի Խաչքար: Մի պառավ կին կար, որ խաչհամբուրն էր հավաքում՝ Սպայի Խաչքարի ճեղքին դրած մանրադրամները, դրանք դնում էին, որպեսզի սրտի նպատակը միանա[1]:

Լիճքի Թուխ Մանուկ[2]

Լիճքի Թուխ Մանուկը գտնվում է գյուղում, շրջապատված բնակելի տներով: Լիճքի Թուխ Մանուկին ասում են նաև Հոխիկյանների Թուխ Մանուկ: Այն ուղղանկյուն տնակ է, երկթեք թիթեղյա տանիքով (նկ. 8): Դռան վերևում, ճակատին մեծ մետաղյա խաչ է: Թուխ Մանուկից աջ Անեյ աղբյուրներից գոյանում է Թուխ Մանուկի առուն: Տարածքում եղել է լացող ուռենի, որից այժմ մնացել է միայն բնի ներքևի մասը:

Ներսում, դռան դիմաց կամարաձև խորշ է բացված, որը հանդիսանում է սրբատեղիի խորանը: Խորշի մեջ մոմերից սևացած խաչքար է ագուցված: Սրբավայրի ներսում, երկու կողմերի երկայնքով փռված են բազմաթիվ շուշպաներ: Դռան դիմացի պատին կան բազմաթիվ վերարտադրանկարներ՝ քրիստո-

---

[1] Հայտնել է Կիրով Մովսիսյանը, 1939 թ. ծնվ.: Քանի որ խաչքարը ճեղքված և հետո միացված է, ճեղքվածքի մեջ դրվող դրամը կատարում է նույն միացնող դերը և դրանով իսկ ի կատար ածում, միացնում իղձը և իրականությունը:

[2] **Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ.**, ԴՆ., գ. Լիճք, 2013:

նեական թեմաներով: Մի քանի նկար և փոքրիկ մոմակալ դրված են խորշի ներքևի մասում: Խորշի դիմաց գտնվում է առանց որևէ փորագրության մի տապանաքար, որի ձախ կողմում նոսր խոտ է աճում (նկ. 9): Խորշի կամարին, նրա երկու կողմերը սևացած խաչքարեր են կամ դժվարորեն նույնացվող բեկորներ, քանի որ սվաղը անխնա ծածկել է շուրջը և երևում են միայն դրվագներ:

Մատուռի միջի տապանաքարը համարվում է Թուխ Մանուկի գերեզմանը: Այստեղ կատարվում է գորտնուկների բուժում: Քանի գորտնուկ որ կա մարդու վրա, այդքան գարու հատիկ են թաղում գերեզմանաքարի մոտ, դա կոչվում է՝ ***տրյրմն****: Թուխ Մանուկի ջրից լցնում են գարիների վրա: Եթե ծլում են, գորտնուկները վերանում են: Այս Թ. Մ.-ը հիմնականում բուժում է մաշկային հիվանդություններ,* ***յրեթիկ****, վերքեր: Հողը վերցնում են տապանաքարի տակից, քսում հիվանդի վերքերին, իսկ սրբավայրի սպասավոր տարեց կինը՝ Հնդրիկ Հոխիկյանը (Հընդրիկ – «ընտրյալ» - անունը նույնպես «սրբի տված» է), Թուխ Մանուկի աղբյուրի ջրից առնում է բերանի մեջ ու թքում հիվանդի վրա: Հնդրիկ մայրիկը, որը Տեր-Բարսեղի տոհմից է, թասի մեջ է լցնում Թուխ Մանուկի ջուրը և մեջը մոմ թափում: Դա արվում է վախեցածների, «լալկվածների» համար: Լիճքի Թ. Մ.-ը նաև երեխաներ է տալիս:*

Թուխ Մանուկի օրերն են երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, այցելում են ցանկացած ժամի: Գալիս են անկախ սեռից ու տարիքից: Մատաղ անում են հիմնականում շաբաթ օրերին: Այսպես, 2011 թ. Երևանից մի դատախազ էր եկել՝ մատաղ անելու իր հիվանդ կնոջ համար: Հոխիկյանների տանն ամեն տարի մեկ տարեկան գառ են մատաղ անում Թ. Մ.-ին: Երբ արու գառ է ծնվում, ամենասկզբից որոշում են, որ սա Թ. Մ.-ի գառն է: Կենդանուն մատաղի համար չեն զարդարում և նշան չեն անում: Մատաղը մորթում են սրբավայրի դռան աստիճանների վրա, մորթում է երեխայի հայրը: Մատաղ անելու ժամանակ միանգամից կտրում են գառան գլուխը, երեխայի կամ հիվանդի ճակատին արյունով խաչ են անում, գերեզմանաքարի վրա նույնպես: Մնացած արյունը լցնում են Թ. Մ.-ի ջուրը:

Երազում սուրբը գալիս է տարիքով մարդու կամ Զորավար Անդրանիկի կերպարանքով: Երազներից մեկում սուրբը երեք բանալի է տվել բանասացի որդուն՝ կանխավ հարցնելով. «Մանուկը սա՞ է»: «Այո՛», – լինում է պատասխանը (Մանուկ այստեղ ոչ թե անուն է, այլ ուղղակի «երեխա» է նշանակում): Թեև տղային (որ մեր այցելության պահին բանակում էր) սուրբը չէր տվել, պատանին հոգեպես կապված է Թուխ Մանուկին, որը նրա հովանավորն է:

Ըստ ավանդության, սուրբ Թուխ Մանուկը նույն ինքը Զորավար Անդրանիկն է, ով փրկել է մի երեխայի, որն իր ձեռքին խաչանշան ուներ և թաքնվել

էր Թուխ Մանուկի ետևում, երբ թուրքերը գյուղ են ներխուժել: Զորավար Անդրանիկը նստեցնում է նրան իր ձիու վրա և տալիս է նրան երեք բանալի[1]:

Երեխայի ձեռքի խաչանշանը վկայում է նրա ընտրված լինելը[2]: Իսկ Զորավար Անդրանիկի ու փրկված երեխայի պատմության զուգահեռը հանդիսացող երազում Հոխիկյանների որդին նույնանում է այդ երեխայի հետ, ասես, նրա մեջ է մարմնավորվում փրկված մանուկի հոգին:

Ներքին Գետաշենի Թուխ Մանուկ[3]

Զորի բերանին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցուց դեպի ձորը տանող աստիճանների ներքևում, ժայռի տակ գտնվում է Ներքին Գետաշենի Թուխ Մանուկը (նկ. 10): Աստիճաններից երևում է սրբավայրի թիթեղյա տանիքը, եկեղեցուց դեպի ձոր իջնելիս ճանապարհն անցնում է սրբավայրի մոտով: Տակը հոսում է Արգիճի գետը, անմիջապես սրբավայրի կողքով առու է հոսում, ժայռից նույնպես առվակ է իջնում, շուրջը բարդիներ են: Մյուս անունն է Զորի վանք: Մատուռն այնպես է կառուցված, ասես դուրս է գալիս ժայռից:

Սրբավայրի մեջ կա երեք տապանաքար. մեկը՝ մեջտեղինը, օրորոցաձև է, սրա տակ փոքր փոս է, հավանաբար, այստեղից հող են վերցնում բուժական նպատակներով: Այն մատուռի ուղիղ մեջտեղում է: Դռան դիմացի պատի տակ դրված տապանաքարը յուրահատուկ բեմ է, որի վրա շարված են մի քանի վերարտադրանկարներ, իսկ գլխավերևում ձախ կողմի պատին հենած է մի խաչքար: Հակառակ պատի դիմաց դրված է մոմավառության սեղանը, որի ետևում պատին է հենած ևս մեկ մեծ խաչքար՝ մոմերից սևացած ու դեղնած: Պատին ևս մի քանի նկար է փակցված (նկ. 11): Աջ պատի երկայնքով շարված են ևս երեք հին խաչքարեր:

Սրբավայրի հետ է կապվում հետևյալ ավանդությունը: Մի անգամ խիստ երաշտ է լինում: Գյուղացիներից մեկին երազում սուրբ է գալիս և հրամայում. «Թուխ Մանուկը շինի՛ր»: Մինչ այդ մատուռը կիսավեր էր և տանիք չուներ: Երազատեսը հայտնում է համագյուղացիներին: Համատեղ ուժերով կապում են սրբի տանիքը: Վերջացնելու պահին ուժեղ անձրև է գալիս[4]:

---

1 Պատմեց Հոխիկյանների հարսը (բանասացը ցանկացավ անհայտ մնալ):

2 Երեք բանալիների՝ Հոխիկյանների տոհմի ներկայացուցչին նվիրելը, ևս ընտրելու նշանակությունն ունի: Հնարավոր է, որ յուրաքանչյուր բանալին խորհրդանշում է մի հիվանդություն կամ խնդիր, որը բուժում կամ լուծում է Թուխ Մանուկը՝ իր ընտրյալի միջոցով:

3 **Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ.,** ԴՆ., գ. Ներքին Գետաշեն, 2013:

4 Գրիգորյան Տերենտ, 1945 թ. ծնվ.:

Կարմիր գյուղի Թուխ Մանուկ[1]

Կարմիր գյուղի Թուխ Մանուկը գտնվում է գյուղի գերեզմանոցում, մի բարձր բլրի վրա, գերեզմանոցի արևմտյան կողմում (նկ. 12)։ Այն ուղղանկյուն տնակ է, երկթեք տանիքով, գլխին մետաղյա խաչ, դռան վերևում, ճակատին նույնպես խաչ է ամրացված։ Դռան երկու կողմերում, պատի մեջ ագուցված են մեկական խաչեր, դռնից աջ, քիչ վերև փակցված է «Թուխ Մանուկ» գրությունը։ Տնակը կառուցվել է մի քանի տարի առաջ, պատերը բոլոր կողմերից սվաղված են։

Մտնելով ներս, հենց դռան դիմաց, գետնից մոտ կես մետր բարձրանում է բեմը, որը կիսաշրջանաձև է (նկ. 13)։ Բեմի վրա, սեղանի փոխարեն կանգնեցրած է նորաստեղծ խաչքար, որի ստորին մասում տաճարի բարձրաքանդակ է, իսկ կենտրոնում՝ մեծ խաչ՝ առնված տաճարանման կամարի մեջ։ Խաչքարի որոշ մասեր արդեն սևացել են վառած մոմերից։ Բեմից վերև, խաչքարի ուղիղ վերևում բացված է կլոր լուսամուտ։ Դրանից վերև եռանկյունաձև խորշ է սարքած, որի գագաթը տանիքը պահող գերանի սկիզբն է։ Բեմի վրա, ինչպես և բեմի պատի վերևի մասում, նաև խորշի մակերեսին տեղադրված են զանազան առականեր՝ վարարտադրանկարներ, փայտյա խաչեր, մետաղյա մոմակալներ, աջ ծայրում տուֆից թեթև մշակված, կոպտատաշ արձանանման խաչապատկեր։ Խորշի մակերեսին առանձնանում են ձախ ծայրում եռագմբեթ տաճարի մանրակերտը, իսկ կենտրոնական մասում՝ մետաղյա կոպիտ խաչը։ Դուռը բաց վիճակում սրբավայրի ներսում լուսավոր է։

Այս Թուխ Մանուկը իր նախնական ձևով հիշատակում է Մ. արք. Սմբատյանցը, որի ժամանակ գյուղի անունը Ղուլալու էր։ Սմբատյանցը նշում է, որ Թուխ Մանուկը գտնվում էր հանդում և այն անվանում է մատուռ[2]։ Գյուղում մեզ պատմեցին, որ սկզբում եղել է Թուխ Մանուկը, իսկ շրջակայքը հետագայում է վերածվել գերեզմանոցի։ Երբ շինությունը դեռ չկար, մոմերը վառում և կպցնում էին Թ. Մ. քարին և շրջակա քարերին։ Ստացվում է, որ նոր մատուռը սարքել են հնի տեղում, որն ավերվել է ինչ-որ պատճառով։ Նշեցին նաև, որ գերեզման գնալիս, պարտադիր այցելում են Թ. Մ.[3]։ Բանասացը նաև շեշտեց, որ սրբավայրում անցյալ տարի դուռը բաց էր մնացել, աղանդավորները վառել էին միջի նկարները։ Գուցե հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ այս Թ. Մ.-ի ներսում այնքան շատ չեն նվիրատվությունները, որքան այլ Թուխ Մանուկներում։

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան,** ԴՆ, գ. Կարմիր, 2013։

[2] Մեսրովբ արք. Սմբատեանց Նախիջևանցի, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1985, էջ 496։

[3] Բանասաց Թաթուլ Վարդանյան, 1965 թ. ծնվ.։

Բոլոր Թ. Մ.-ի կարևորագույն մասն է քարը։ Այն կարող է լինել ցանկացած տեսակի ու ձևի քար. խաչքար, խաչքարի բեկոր, ժայռակտոր, ինչ-որ պատկերով քարակտոր, գետաքար և այն, բայց միշտ՝ հնության հետքերով։ Մտնելով Կարմրի Թ. Մ., մենք զարմացանք, որ այդպիսի քար չկա, եղածը նոր խաչքարն է և այլևայլ նոր քանդակներ։ Պարզվեց, որ հին քար եղել է, սակայն կառուցման աշխատանքների ժամանակ այն փակել են բեմի տակ[1]։ Մեզ հաջողվեց տեղում պարզել, թե ինչ տեսք է ունեցել Թուխ Մանուկի քարը։ Այն 50-60 սմ լայնքով, 80-100 սմ երկարությամբ, 10-15 սմ բարձրությամբ սովորական մի քար է եղել, մոմերից սևացած։ Շատ հին ժամանակներից հարթեցված լինելը երևում էր անզեն աչքով։ Ըստ պատմողների՝ հարթեցված էր ձեռքով։ Իրենց գծանկարի համաձայն, աջ կողմն ու վերևի երկու կողմերը ժամանակի ընթացքում ծռմռվել էին[2]։

Թ. Մ. գնում են բոլոր այլ սրբավայրերի հետ, Ջատկի առավոտյան։ Մեռելոցներին գնում են գերեզմաններ, հետո՝ Թ. Մ.։ Գալիս են նաև հեռու տեղերից նախկին գյուղացիները, օտարները՝ երազով (երազում սուրբը հայտնում է, որ պետք է գնան այսինչ տեղը)[3]։ Գալիս էին հիմնականում շաբաթ-կիրակի օրերին, նույնիսկ շաբաթվա մեջ 2-3 անգամ։ Մյուս տարբերակով Թ. Մ. գալիս էին հիմնականում չորեքշաբթի և շաբաթ օրերին՝ մինչև մութն ընկնելը, հիմնականում գալիս են նախկին գյուղացիները, հազվադեպ՝ օտարները։ Մատաղ են անում՝ աքաղաղ կամ գառ։ Սրբի օգնությամբ հիվանդությունների բուժման մասին տեղեկություններ չկան[4]։ Սակայն, ինչպես հայտնեց մյուս բանասացը, Թ. Մ. մատուռը սարքողը՝ Թորգոմ Սարգսյանը, «վատ հիվանդություն» ուներ, տնակը սարքելուց հետո լավացավ, իսկ տարիներ անց, մահանալուց հետո՝ թաղվեց Թ. Մ.-ի դիմաց[5]։

---

[1] Երբ մենք չգտանք քարը և ոգևորված կիսվում էինք մեր տպավորություններով, մեզ ուղեկցող երիտասարդները՝ Արմանն ու Գարիկը, հայտնեցին, որ քարը եղել է։ Նրանցից մեկը զանգահարեց վերանորոգողին, և ես խոսեցի նրա հետ։ Իմ հարցին, թե ինչու՞ են ծածկել քարը, նա տագնապած պատասխանեց, որ այն սև էր մոմերից, սովորական մի քար էր, և նրանք չեն իմացել, որ այն կարևոր է։ Իսկ հետո էլ ավելի տագնապած հարցրեց, թե արդյոք մեղք չե՞ն արել՝ թաքցնելով քարը։ Ստիպված հանգստացրեցի, որ դժվար թե դա սրբապղծություն է։ Բանն այն է, որ ժողովուրդը սովորաբար զգուշանում է սրբերին վիրավորելուց, քանի որ նրանք կարող են «խփել»՝ որևէ հիվանդություն կամ դժբախտություն պատճառելով։

[2] Հայտնել է Գարիկ Գափոյանը, 1989 թ. ծնվ.։

[3] Հայտնել է Սիրուն Բատիկյանը, 1923 թ. ծնվ.։

[4] Հայտնել է Արման Շիշանյանը, 1989 թ. ծնվ.։

[5] Հայտնել է Լյուբով Ցակովլևա-Էլոյան, 1948 թ. ծնվ.։ հարսը՝ Գոհարը, 1983 թ. ծնվ.։

Արմանը պատմեց նաև, որ մի կին երեխա չէր ունենում, Թ. Մ.-ում մատաղ անելուց, մոմ վառելուց հետո երեխա տղա է ունենում, անունը դնում են Մանուկ։ Այդ երեխան անվերջ ձգտում է Թ. Մ. գնալ և շատ է տեսնում երազում[1]*։*

Մենք այցելեցինք այդ տունը՝ երեխային տեսնելու և նրանց հետ զրուցելու նպատակով։ Մանուկի տատը պատմեց, որ երկու տարի Գոհարը (հարսը) երեխա չէր ունենում, հետո հղիացավ։ Թ. Մ.-ը եկել է Աշոտի (երեխայի հոր) երազում, սուրբը, որ երիտասարդ տղամարդ էր, քայլում էր գերեզմանոցով դեպի Թ. Մ. սրբավայրը։ Աշոտը լսում է նրա խոսքերը. «Երեխա կունենաս»։ Նույն ամսում կինը հղիանում է։ Երբ պետք է ծնվեր, հիշեցին, որ սուրբն է տվել, և անունը դրեցին Մանուկ։ Այս հաղորդումներից պարզ է դառնում, որ Կարմիրի Թ. Մ.-ի գործառույթներից է երեխա շնորհելը։ Երեխայի «ուշքն ու միտքը» Թ. Մ.-է, նա հաճախ գնում է սրբավայր՝ խաղալու։ Հաճախ են այցելում, առաջին երազից հետո, ամեն տարի, միշտ գառ են մորթում[2]*։*

Երեխան, 5-6 տարեկան Մանուկն այդպես էլ մեզ մոտ չեկավ, փախել էր տան աջ կողմի բլրակի վրա, որից այն կողմ Թուխ Մանուկն է և չէր իջնում։ Այսպիսով նա իբրև թե պաշտպանվում էր օտարներից՝ մեզնից, Թ. Մ.-ի մոտ։

Նկ. 1


Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

---

[1] Հայտնել է Արման Շիշանյանը։

[2] Հայտնել է Լյուբով Յակովլևա-Էլոյանը և իր հարսը՝ Գոհարը, 1983 թ. ծնվ.։

Նկ. 6



Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11

Նկ. 12



Նկ. 13

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԻ ՔԱՆԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարեն Հովհաննիսյան

Բանալի բառեր՝ *Թուխ Մանուկ, սրբավայր, խաչքար, ավանդություն, պաշտամունք, ուխտ:*

Վերը նկարագրված վեց Թուխ Մանուկներից հինգը տնականման են, վեցերորդը՝ Գեղհովիտինը, վերակառուցված է որպես եկեղեցի: Երեքում գլխավոր սրբությունը խաչքարեր են, երկուսում՝ տապանաքարեր ու խաչքարեր, իսկ Կարմիրի Թուխ Մանուկում եղել է ուղղանկյուն ժայռաքար, իսկ այժմ՝ նորաստեղծ խաչքար է: Հինգին բնորոշ է նաև ջրի՝ աղբյուրի, առվի կամ նոսր ջրվեժի, առկայությունը, ընդ որում երկուսի դեպքում աղբյուրը նույնպես կոչվում է Թուխ Մանուկ: Իսկ Ներքին Գետաշենի դեպքում պահպանվել է ավանդություն անձրև բերելու մասին: Այս Թուխ Մանուկների հիմնական գործառույթներն են.

ա. երեխա տալը,

բ. երեխաների խնամքն ու բուժումը,

գ. մեծահասակների մաշկային հիվանդությունների բուժումը,

դ. առնվազն երկու դեպքերում (Գեղհովիտ, Լիճք)՝ զինվորների պահպանություն:

ե. Գեղհովիտի Թուխ Մանուկն ունի նաև ճանապարհորդների պաշտպանության գործառույթը:

Թուխ Մանուկի տված երեխային հիմնականում անվանում են Մանուկ՝ սրբի պատվին: Թուխ Մանուկները կապված են մեծ տոների, մասնավորապես Վարդավառի և Զատկի հետ, երբ դրանց ուխտ են գնում և մատաղներ են մատուցում: Այլ ժամկետներին կատարվում են անհատական ուխտեր՝ մասնավոր փափագներով:

Գեղհովիտի և Լիճքի Թուխ Մանուկների անձնավորած սուրբը ընկալվում է («-տեսիլք, երազ է գալիս») որպես զինվորական, հասուն մարդ, իսկ Լիճքի սրբավայրի մեջ գտնվող տապանաքարը Թուխ Մանուկի գերեզմանն է:

О НЕСКОЛЬКИХ СВЯТИЛИЩАХ ТУХ МАНУК В ОБЛАСТИ ГЕГАРКУНИК

Карен Оганнисян

Ключевые слова: *Тух Манук, святилище, камень-крест, традиция, культ, поломничество.*

Статья основана на авторских полевых исследованиях, проведенных летом 2013 г. в поселке Мартуни, селах Варденик, Неркин Геташен, Геговит, Личк и Кармир области Гегаркуник.

Пять из шести рассмотренных святилищ Тух Манук являются домиками, а шестой, в с. Геговит, переобразован в маленькую церковь. В трех главной святыней являются камни-кресты, в двух – могильные камни и камни-кресты, а в святилище с. Кармир был кусок скалы, а сейчас стоит новый камень-крест. Пятерым характерно наличие воды: родник, ручей, маленький водопад, при том в двух случаях родник также называется Тух Манук. С святилищем с. Неркин Геташен связана легенда с вызыванием дождя.

Основные функции вышеописанных Тух Мануков:

1. одаривание ребенком,
2. ухаживание и лечение детей,
3. лечение разных кожных заболеваний у взрослых,
4. по крайней мере двоим из них присуще защита служащих в армии.
5. святилище с. Геговит также имеет функцию защиты путешественников.

Данного Тух Мануком ребенка в основном называют в его честь – Манук. Святилища Тух Манук связаны с большими праздниками, в частности с Вардаваром (народное название праздника Преображения Спасителя) и Пасхой. Им совершают поломничества и жертвоприношения. По другим датам к ним совершают личные паломничества с частными запросами. Персонифицированный святой Тух Мануков Геговита и Личка воспринимается (“появляется в видении, во сне”) как военный, взрослый человек, а находящийся в святилище Личка могильный камень считается его могилой.

ON SEVERAL HOLY PLACES TUKH MANUK IN GEGHARKUNIK REGION

Karen Hovhannisyan

Keywords: *Tukh Manuk, holy place, cross-stone, tradition, cult, pilgrimage.*

The article is based on the authour's field investigations fulfilled during the summer of 2013 in the communities Martuni, Vardenik, Nerkin Getashen, Geghovit, Lichk and Karmir of the region Gegharkunik.

Five of six investigated holy places named Tukh Manuk are small houses, the sixth in the village Geghovit is reconstructed as a small church. In three shrines the main sanctity is a cross-stone, in two – tombstones and cross-stones, and in the village Karmir there was formerly a rock block and now it is replaced by a new cross-stone. Five holy places are placed near water sources: springs, brooks, a little waterfall, and in two cases the brooks also are called Tukh Manuk. With the holy place in Nerkin Getashen a legend about rainmaking is connected.

The main functions of Tukh Manuk holy places are:

1. presenting a child,
2. care after children and their healing,
3. healing of different skin diseases of adults,
4. as minimum two shrines protect soldiers,
5. the holy place of Geghovit has the function of protecting voyagers.

Children given by Tukh Manuk is being named after the saint of the holy place – Manuk. Tukh Manuk shrines are connected with seasonal holydays and great festivals, in particular – with Vardavar (the folk name of Transfiguration) and Easter. There are pilgrimages to Tukh Manuk and sacrifices to him. On other days those shrines are visited in the form of personal pilgrimages with proper enquiries.

The personified saint of Tukh Manuk holy places of Geghovit and Lichk is comprehended (reveals in visions and dreams) as a military adult man, and the stone within the sanctuary of Lichk is believed to be his tomb.